

Արդյոք գիտե՞ք:

ՄԴՎ-ն առաջացնում է 9 տեսակի քաղցկեղներ և սեռական գորտնուկներ: ՄԴՎ-ի պատվաստումը լավագույն մեթոդն է վիրուսից պաշտպանվելու համար:

Այն օգնում է բոլոր տարիքային խմբի անձանց: Պատվաստումը պաշտպանում է վիրուսի տարբեր տեսակներից, որոնք դեռ օրգանիզմ չեն ներթափանցել: Եթե ինքնալավացման եղանակով օրգանիզմը ազատվել է պապիլոմա վիրուսից, պատվաստումը կօգնի որպեսզի տեղի չունենա կրկնավարակ: Անկախ ամեն ինչից պատվաստված ես թե ոչ, պետք է հանձնել ՊԱՊ քսուկ, արգանդի վզիկի քաղցկեղը վաղ փուլերում հայտնաբերելու կապակցությամբ:

Կարևոր քայլեր ուղղված ՄԴՎ-ով պայմանավորված քաղցկեղներից և սեռական գորտնուկներից պաշտպանվելու համար:

- ✓ Ես կստանամ ՄԴՎ պատվաստանյութ անկախ տարիքից, սեռից և կարգավիճակից:
- ✓ Եթե ունեմ արգանդի վզիկ, անպայման պետք է անցնեմ ՊԱՊ քսուկի թեստավորում:
- ✓ Ես պետք է խորհորդ տամ, իմ սիրելիին պատվաստվի և ժամանակին ենթարկվի սքրինինգի:

www.hpvglobalaction.org



Ինչպես պաշտպանվել: 9 տեսակի քաղցկեղներից և սեռական գորտնուկներից:



Ինչ պետք է իմանալ ՄԴՎ-ի մասին:


Կանադացիների մոտ 75%-ը կայնքի որևէ փուլում ձեռք է բերում ՄԴՎ վիրուսի առնվազն 1 տեսակ:

Մարդիկ կարող են ձեռք բերել անգամ մաշկ-մաշկ սեռական շփման միջոցով, նույնիսկ առանց ներթափանցման:

Պահպանակը շատ լավ պաշտպանում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից, անցանկալի հղիությունից: Պահպանակը պաշտպանում է ՄԴՎ-ից հիմնականում, բայց չի տալիս ամբողջական պաշտպանություն, քանի որ վիրուսը կարող է փոխանցվել ման մաշկ-մաշկ սեռական շփման միջոցով:



Որոշ քաղցկեղներ, որոնք առաջանում են մարդու պապիլոմա վիրուսներից:



Արդյոք գիտե՞ք:

Այս վիրուսը կարող է օրգանիզմում քնած մնալ մինչև 40 տարի և հետագայում արտահայտվի քաղցկեղի տեսքով: Դա նշանակում է, որ այսօրվա ձեռք բերած ՄԴՎ-ն ախտահարելու է քեզ տարիներ հետո:

Ինչ են սեռական գորտնուկները:

- Փոքրի ածող գոյացություններ են, որոնք կարող են տեղակայված լինել խմբերով կամ միայնակ: Որպես կանոն անցավ են, բայց կարող են առաջացնել քոր, ինչպես նաև արյունալին արտադրություն:
- Կարող են հայտնաբերվել մարմնի ցանկացած հատվածում: Գոտկատեղից մինչև ծնկներ, կրծքավանդակին, մեջքին, բերանում:
- Անգամ եթե ունենք վիրուսը, սեռական գորտնուկները կարող են առաջանալ տևական ժամանակ հետո:
- Դուք կարող եք փոխանցել վիրուսը նույնիսկ այն ժամանակ երբ ակներև բացակայում են սեռական գորտնուկները:

